

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ՀԱՌՀ
ԱՐԺՈՂԿՈՄԱՏ



Բժ. ԱԼԵՔՍԱՆԴՐԻ Ա.

ՊԱՅՔԱՐ ՎՈԶԻԼՆԵՐԻ,
ՓԱՅՏՈԶԻԼՆԵՐԻ ՅԵՎ
ԼԿԵՐԻ ԴԵՄ

614
Գ-29

ԱՐԺՈՂԿՈՄԱՏ • 1939 • ՅԵՐԵՎԱՆ

28 JUL 2010

№ 16 ՍԱՆԼՈՒ ԴՐԱՆՑՐԱՆ № 16

614
հ-29 սր.

Բժ. ԱԼԵՔՍԱՆԹԱՆ Ա.

1007
29996

ՊԱՅՔԱՐ ՎՈԶԻԼՆԵՐԻ,
ՓԱՅՏՈՎԻԼՆԵՐԻ ՅԵՎ
ԼՎԵՐԻ ԴԵՄ

ԱՐԺԱՂԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՐԾԱԿԻ ԲՈՒԺԱ
ԵՐԵՎԱՆ 1952

01.02.2013

ԱՌԱՋԱԲԱՆ

Գյուղատնտեսության սոցիալբառական սեկտորի և
արդյունաբերական շրջանների տանիտարական սպառ-
սարկման գվարագույն խնդիրներից մեկը ներկայաց-
նում է այն հարցերի բաժնումը, վորով կտավլած և համա-
ձարակային հիմքությունների դեմ պայքարելու հետ:

Այստեղ պետք է մշակել լայն առողջացուցիչ մի-
ջոցներ, վորոնք աստիճանաբար լիկվիդացիայի յեն
յենթարկելու պարագիտար տիֆերը: Համաձարակների
դեմ պայքարելու միջոցներից մեկն ել բոլորին անխորի
պատվաստի յենթարկելին ե: Անհրաժեշտ է, տուաշին
հերթին, թեկուզ ժամանակափորապես հիմնել բազուիք-
ներ, վորպես լավագույն միջոց կեղտոտություններից
և վոշտություննեց սորտի սրտի, մեր
կենցաղային պայմանները վոշիների և մյուս պարա-
գիտների բազմանալու համար բարենպաստ հող են ներ-
կայացնում, վորի հետեւկանքով նրանց դեմ պայքարի
դործի կազմակերպումը չափազանց բարդանում է: Նա
կտա դրական արդյունք միայն մեր յերկրի սննդուա-
կան և կուլուրական աճումով: Իսկ ներկայում այդ
բանի համար կան բոլոր նախադրյալները: Դրա համար
ել մենք լիսվին համոզված ենք, վոր միջաների վո-
չընչանալու դեմ ուղղված մեր միջոցառումները կոտհ
իրական եֆեկտ:

Սույն բրոշյուրը, վոր կարմել և Հայաստանի Առ-
ժողկոմատին առընթեր Սանիտարիայի և Հիգիենայի
Ինստիտուտի եպիդեմիոլոգիայի բաժնի վարիչ՝ բժիշկ
Ա. Ալեքսանյանը, ուր լայն աշխատավոր մասնակի
համար հասկանալի, պարզ ու մատչելի ձևով բացառը-
վում է վոշիների, փայտվոշիների և լվերի դեմ պայ-
քարելու գիտակոր միջոցները, կտա դրական արդյունք:
Կասկած չկա, վոր բրոշյուրում առաջ բերված հրա-
համենների գործադրամը կհանդիսանա վարակիչ հիմքան-
դությունների, ամենից առաջ, պարագիտար տիֆերի
դեմ մղելիք հաջող պայքարի դրավակախն:

Բժշկական հետաքանութեան երապերիամենսաւ
Հիգիենայի ամբողջական մասի պրոֆ. և ԱՐԿԵՊԵՏԱՆ
Եւրեկան. ՀՈԽՀ - ՀԾՊԱ :
ՀԱ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ
ԱՅՍԻՐԱԿԱՆ ԱՎԱՐԱ

Առժողկոմատի խնդրանոք յես ծանոթացա ըժ .
Ա . Այեքսանյանի ձեռագրի հետ , վորը նվիրված
է վոչիլների , լիերի և փայտվոջիլների դեմ մղվող
պարզաբի հարցին : Աշխատությունը կարդաց ին-
քը հեղինակը . խորհրդակուցության հետեւանքով
աշխատության դանագան տեղերը համաձայնեց-
ված են : Ընդհանուր առմամբ այդ աշխատությունն
արտացոլում է իր մեծ հիշյալ պարագիտների դեմ մղվող
կովիր ու նրանց կենսարանության հարցի ժամանակա-
կից զրությունը , վորքան այդ հնարավոր ե անել հա-
մառու ձեզով :

Ճիշտ ե դրված հեղինակի կողմից հիշյալ պարա-
գիտների դեմ պայքար կարմակերպելու սկզբանքների
հիմնական դրվածքը , սանկազմակերպությունների ու
աշխատավորության ակտիվությունը խթանելու տեսա-
կետից :

Առաջադրվող պայքարի միջոցները շատ չեն , բայց
ներդրական են : Հարց ե առաջ գալիս միայն նրանց
տեխնիկական մատչելիության վերաբերմամբ , այս կամ
այն քիմիական նյութերի առկայության մտքով : Բայց
այդ հեղինակից չե կախված , վորովհետև չի կարելի
առաջնորդ համատեսել , թե նյութերից վո՞րոնք են դե-
ֆիցիտային կամ ընդհակառակը—զանվորմ առատու-
թյամբ :

Աշխատանքն արժե տարածել բժիշկների մեջ և տիմ-
շրջանակներում , ուր հետաքրքրություն կա և կապված
են սանսարական աշխատանքի հետ : Սույն աշխատու-
թյունը նյութ ե տալիս պատրաստելու սան-լուս աշխա-
տանք տանող անձինք :

Թափմա-սանիտարական ահաւեմիայի
սլրոփ . ՅԵ . ՊԱՎԼՈՎՍԿԻ

26/VI 1971 թ .

Յերեվան

4

ՊԱՅՔԱՐ ՎՈԶԿԱՆԵՐԻ, ՓԱՅՏՎՈԶԿԱՆԵՐԻ ՅԵՎ ԼՎԵՐԻ ԴԵՄ

Միջատների դեմ մղած պայքարը ներկայանում է
վրաբեն մի մեծ հակահամաճարակային միջոց . վորն
արգելե և հանդիսանում զանազան վարակիչ հիվանդու-
թյունների փոխանցման : Այդ կողմից զվարակոր գերբ
խաղում են վոչիլները , փայտվոջիլներն ու լիերը :

Այդ միջատները ներկայանում են բծավոր և վե-
րադարձ տիֆի , ժանտափակի (չումայի) և այլ հիվան-
դությունների տարածողությունը :

Վոչիլները , փայտվոջիլներն ու լիերը մեր մեջ ա-
ռող են բերում զգանք և խանգարում են մեր հանդիս-
ուու : Արդյունաբերության , խորհանտեսության և կոլ-
ոնտեսության մեջ աշխատող բանվորությունը , յերբ
շերեկվա աշխատանքից հետո կարիք է զգաւմ հանդատի ,
վորակեազի կարողանա հետեւյալ որը նոր ու թարմ ու-
ժերով աշխատանքի անցնել , հաճախ հնարավորու-
թյուն չի ունենում ինչպես պետք ե հանգստանաւ ,
քննել : Պարզ ե , վոր բանվորի հանգստություն խանդա-
րողներն արդ պարագիտներն են : Հետեւյալ որը
բանվորն իրեն զգում է ջարդված ու անտրամադիր , վա-
րը , բնականաբար չի կարող բացասարար չանդրագա-
նաւ նրա աշխատանքի արտադրողականության վրա :

Բացի այդ , պարագիտներն իրենց խածումներով պր-
դըսում են մաշկը և առաջ են բերում , ինչպես հայտնի
է , քոր ու մաշկի հիվանդներ :


Հետեւալես այս ամենը , ամեն մեկիս վրա պարտք է
զնում , բոլոր միջոցներով պայքարել նրանց դեմ : Բայց
պետք է արտեղ նկատենք , մու սրանց դեմ մղելիք
պայքարն այնքան էլ հեշտ չե : Ճիշտ ե , այն միջոցները ,
վորոնք գործադրություն են այդ պարագիտները վոչիլները

5

նելու համար, այսքան ել բարդ չեն, նույնիսկ, կարելի
յն ասել, վոր նրանց գործադրման տեխնիկան չափա-
ցանց ոլարդ է, սաևայն մյուս կողմից վոջիների,
գայաբանչիների ու լիների զեմ մշած պայքարը ժեղա-
նից մեծ ուշաղբություն և սխանմատիկ աշխատանք
է պահանջում:

Իսկ վո՞րոնք են նրանց զեմ պայքարի միջոցները:
Բայց նախքան նրանց անցնելը, մենք պետք են ծա-
ռոթանաք մեզ հետաքրքրով միջաների կյանքի ու
ընթորվայի հետ, վորպեսզի կարողանաք ել ավելի
ինչ զարգացնել մեր պայքարի ուսցիունալ միջոցնե-
րինացի:

Վո՞յիները, մաքայնչիներն ու լիները տիալիկ պա-
րապիտ միջատներ են և ուստի անում են հողավորների
կաթալիտոգրամ) դասին:



Նկ. 1

Գլխի վոչիլ—եզ, մեծա-
քած դիրեն.



Նկ. 2

Վոջիներից մեզ հետաքրքրում են՝ զիսի (- Pecli-
culus capitis) չորի (Pediculus vestimenti) և այլու (Peclie-
lus rubis) վոջիները (տես նկ. 2, 3, 4)

Նորա բարձանում են չափազանց արագ: Բնագետ

Ենթանդուկն իր հայրնի գուրզայի մեջ, 2 եղ վոջինե-
րից, 2 ամալսա ընթացքում, աճեցրել եր 18 հողար վո-
ջիլ, իսկ, ըստ պրոֆ. Պավլովսկու, մի վոջինից, նրա
ամբողջ կյանքի ընթացքում, ստացվում է 4160 հատ:



Նկ. 3 Ծորի վոչիլ—եզ.




Նկ. 4

Ծորի վոչիլ—արու.

Մարդու զիմի մազերում կամ նրա չորերի մեջ,
չատ կարծ ժամանակամիջոցում, կարող են առաջ զալ
վոջիների այնպիսի մեծ քանակություն, վոր սովորա-
կան միջոցներով նրանցից աղատվելու վոչ մի հնարա-
վորություն չի լինի: Վոջիներն իրենց ամբողջ կյանքն
անցկացնում են մարդու վրա. դա նրանց մշտական բը-
նակալացրն են: Այս ինչ, մաքայնչիներն ու լիները, սո-
վորաբար, մարդու վրա չեն ասլում, այլ այցելում են
նրան միայն սննդնդ ստանալու նպատակով: Վոջիների
աճեցումը կատարվում է կենսարանական թերատ կեր-
պարանափոխությամբ. եզը զնում է ձվիներ (անիծ-
ներ), վորոնցից զաւոր է զալիս վորոց: Վորոն ել առանց
հարսնյակ զանալու՝ կերպարանոփոխում և սեռա-
հասուն վոջիլ: Միջին հաշվով վոջիներն ապրում են
20-ից մինչև 50 որ: Վոջիների (զիմի ու չորի) շարժման
մաքսիմումը, մեր զիտուղությունների համաձայն, 1-2
բուդեյում, հանուն է մինչև 25-40 սմ, իսկ պրոֆ.
Պավլովսկու տվյալների համաձայն՝ 35 սմ մեկ բուզե-
յում:

Բորբը վողիներն ել, ինչպես արյունուշտներ, անվում են արյանով, վորի համար գործ են զնում, ի՞րենց՝ այսպես կոչված՝ խայթոցը (բերանի մասերը վորով ծակում են մաշկը): Նկատի առնելով, վոր վողի խայթոցը միացած է թուք արտադրող գեղձերի հետ՝ դրանով կարելի յե բացատրել այն փաստը, վոր արյուն ծծելու գործողության միջոցին, արյունը խառնվում է թուքի հետ, իսկ թուքն այն հատկությունն ունի, վոր չի թողնում արյունը մակարդվելու (թուքն առաջնամ և ինտոկսիկացիա): Յուրաքանչյուր մի վողի պրվա ընթացքում կծում և մարդուն, միջին հաշվով, 2 անդամ: Վողիլը, համաձայն Առժողկոմատի Սանիտարիայի ու Հիգիենայի ինստիտուտում կատարած գիտությունների, մի անգամից ծծում է 0,004-ից մինչև 0,008 գրամ արյուն: Փորձի համար մենք վերցրել ենինք վողիներ ու կըուել նրանց անալիտիկ կըեռքով սնվելուց առաջ ու հետո: Վողիլը, յերբ կուշտ ե, լույսից խուսափում է (բացասական մերաբերմունք դեպի լույսը):



Նկ.

Նկ. 5 Վուսայն-անիճներով Շորի, գլխի անիճներ Պետք ե բնթատրել, վոր վողիները զուրկ չեն հոսառությունից. նրանց վերաբերմունքը դեպի վորոշ քեմիական հոսառի առաջնական նյութերը բուցառական ե (բացասական քիմիատական), ինչպես որինակ, դեպի կրեաղոլի պրեպարատաները:

Գլմի վողիլը, բեղմնավորումից 10-20 որից հետո, որական միջին հաշվով դնում է 4-5 անիծ, իսկ շորի վահանց 5-12: (Տես նկ. № 5 և 6): Գլմի ու չորի վողիլների անիճներից (ձվիկներից) դուրս են զալիս վորգեր, վորոնք իրենց ձեզով չափազանց նման են վողիլին, բայց դեռ սեռականորեն հասունացած չեն: Վորդերն ել սընդում են արյունով (ծծում են): 12-18 որից հետո, վորդը Յ կաչեթափումից հետո, զառնում ե սեռահասուն վողիլը: Յայլվողիլը դնում ե լնդամենը 10 անիծ (ձու): 7-8 որից հետո ձվերից դուրս ե զալիս վորդը, վորը 15-17 որից հետո սեռորեն հասունանում է:

Մյուս միջատը, վորը վոչ պակաս հետաքրքիր ե մեղ համար և վորը ներկայացնում ե նույնական կեղառառության եմբլեմ և հավասարաչափ պատճառ ե զառնում վարակիչ հիվանդությունների տարածվելուն, դուն ե (տես նկ. № 7):




Նկ. 7 Մարդկային լու—արու. 30 ամպամ մեծացրած.

Լվերի տեսակները բազմաթիվ են: Նրանք սովորաբար հեռանում են իրենց տերերից միմիայն նրա մահավանից հետո: Մարդու և կենդանիների վրա ապրողներից պետք ե հիշատակել մարդու լուն (Philex irritans) զաշամակի լուն (L. cheopis), շան ու կատլի լիմեր (Ctenocephalitis serratus), ուրիշները: Բոլոր լիմերներ աեղափոխվում են մի կենդանու վրայից մյուսը: Կենդանիների լիմերը տեղափոխվում են մարդու վրա, մինչեւ մարդու լուն սովորաբար չի անցնաւմ կենդա-

Նիներին : Լուս սովորաբար ապրում եւ ինքնուրույն կերպով և միայն այն ժամանակ է հարձակվում մարդու վրա, յերբ քաղց ե զգում . սակայն նա կարող է ապրել և մարդու վրա :

Լվերը ծծում են արյունը՝ այդ նսվատակի համար առանձնապես հարժարեցված իրենց բերանում :

Լվերն ապրում են ու բազմանում սովորաբար չորս ապրի ու փոշու մեջ, նույնական և հասուակի տակ ու կենդանիների ըներում : Լվերը չափաղանց պահանջկոտ են միջավայրի ջերմության ու խոնավության վերաբերմամբ, ուր նրանք ապրում ու բազմանում են : Լվերի համար ջերմության ամենալավաստավոր պայման-



Նկ. 8 Լվի ձվեր, մեծացրած 26 անգամ .

Ներն են՝ 18 աստիճանից մինչև 28 աստ., խոկ ոդի հարբերական խոնավություն՝ 60 աստիճանից մինչև 70 աստիճան : Ջերմության իշեցումն ու խոնավության բարձրացումը շատ խիստ կերպով և անդրադառնում

նրանց կյանքի վրա : Մարդու լուս չոր աղբի (զիբիլի) մեջ մի անգամից զնում է 8-ից մինչև 12 ձու (տես նկ. № 8) : Նրանցից 4-6 որից հետո դուրս են դալիս վորուեր, վորոնք սնվում են իրենց ծնողների (լիլիրի) արտաթորություններով, փառած վայրտով, տարրալուծող որդանական նյութերով և այլն (տես նկ. № 9) :



Նկ. 9

Լվի քրնուրներ, մեծացրած 10 անգամ .

Լվի վորուերը սովորաբար 11 որից հետո կերպարանակոխվում են հարանյակի, վորից 11, կամ հաղվազյուտ գեղցերում, 12 որից հետո ստացվում են սեռահասունելվեր : Յեթե լիի զարգացման ամրող պրոցեսը խոնավության ու ջերմության նորմալ պայմաններում տեսվում է մոտ մեկ ամիս, ապա, այդ պայմանների վավոխման կամ տարբերման հետեւանքով, նրա զանազան ցիկլերի զարգացման ժամանակամիջոցը յերկարում է :

Սապես որինակ՝ լիի վորուերի կյանքը 11 որվա վորուարեն կարող է յերկարել մինչև 200 որ, իսկ հարանյակի կյանքը, 11-12 որվա վորուարեն՝ 240 որ : Բայց յեր-

մության ու խանակության ազդեցությունից, վարդի
կյանքի տեվողության վրա ազդում եւ և սունդը:

Հուն սովորաբար ապրում եւ մեկից մինչև մեկ և
կես տարի: Առանց սննդի լուն կարող եւ ապրել մինչև 4
ամիս (մասավորապես 10 աստիճան ջերմության մեջ):

Սակայն ամենաղիմացկուն և շրջապատող կյանքի
պայմանների նկատմամբ անպահանջուս միջատները
փայտվողիներն են (Acantia testicaria), տես նկ. № 10



Նկ. 10

Անկողի փայտվողի, մեծացրած 15 անգամ.

Փայտվողիները, ինչպես վերին առվեց, յերբեք մար-
դու վրա չեն ապրում: Յերեկը նրանք թագնվում են
(խուսափում են բնական ու արհեստական լույսից) իրե-
քի, կահ-կարասիների, մահճակալների անցքերում,
քահարաններում, գոների, պատերի, վառարանների ծա-
կերում ու արանքներում, պատուհանների փեղկերում
և այլն: Գիշերները դուրս են սողում իրենց կացափա-
յերից, վոր արբենան մարդկային արյունով: Փայտվո-
ղիլը հարձակվում է մարդու վրա արյուն ծծելու 1-2
օրը մեկ անգամ: Փայտվողիներն ապրում են չառ յեր-
կար, չափաղանց արագ աճում են, և ինչպես վերն առ-
վեց, չափից գուրս դիմացկուն են: Դիմացկուն են նը-
մանապես և փայտվողիների ձվիկները: Զերո աստի-
ճանում և ավելի ցածր՝ փայտվողի ձվիկները կարող են

առլել 8 որ, զրոյից բարձր, մինեւ 10 աստիճան, կարող
են պահպանվել մինչև 30 որ: Փայտվողի վորդն ա-
ռանց սննդի կարող եւ ապրել մինչև մեկ և կես տարի,
իսկ փայտվողիներն ապրում են տարիներով, նույնիսկ
ձմեռային խթան պայմաններում դժվագեցուն են ու չեն
վոչնչանում: Դրանով եւ բացարկվում այն հանգա-
ժանքը, վոր մահճակալները ձմռանը դուրս գնելը չի
պնում նրանց վոչնչացմանը: Միջավայրի ջերմության
աստիճանի ինցիմմաք՝ փայտվողիներն ապրում են բա-
կական յերկար ժամանակ. 36 աստիճան ջերմության
մեջ փայտվողիները կարող են դիմանալ քաղցածու-
թյան 8 որ, 30 աստիճանում՝ 15 որ, 24 աստիճանում՝
31 որ, իսկ 12-ից 16, այսինքն՝ սենյակի ջերմության
աստիճանում, չառ ամիսներ: Փայտվողիլի լրիվ զարգա-
ցումը, սննդառության նպաստավոր պայմանների բա-
ցակայության դեպքում, կարող եւ չառ յերկարել:

Փայտվողիլը տարվա ընթացքում մի քանի անգամ
ձու յե գնում 100-150 հատ: Անկողնի փայտվողիլն իբ-
քվերը գնում երակարանի և կահ կարասիքի ծակերում
ու անցքերում (տես նկ. № 10), փորից հետո ձվերից
գուրս են գալիս վորդեր, վորոնք վողիի վորդերի
նման հասունացած են լինում և սնվում են արլու-
նով: Փայտվողիլն ել չի ընդունում հարսնյակի վիճակ,
վորդը 5-6 շաբաթից հետո, 5 անգամ կաշեթափում է չ
հետո, դառնում և սեռահասուն փայտվողիլ:


Ինչպես տեսնում եք նրանց կրանքի ու զարգացման
պայմաններից, վերը նկարազրած միջատները կարմ
ժամանակամիջոցում արագ ու մեծ քանակությամբ
ածում են, ապրում համեմատաբար յերկար ժամանակ
և այնպիսի տեղերում, վորտեղ դժվար մատչելի յե
նրանց վոչնչացներու հակապարզիտային միջոցների
գործադրումը:

Սակայն, չնայելով տեխնիկական դժվարություն-
ներին, նրանց դեմ պայքարելն անհրաժեշտ ե վոչ միայն
առնիտարական որդանների, այլև ամբողջ հասարակաց-
նության կողմից: Այն միջոցները, վորոնք սւզդված են

վողիների, փայտվողիների և լվերի դեմ, անդարձան-նորեն պահանջում են մեզանից կանոն չառնել վոչ մի դը՝ վարության առաջ, յեթե նույնիսկ այդ նպատակի համար մեծ ծախք պահանջվի:

Այս վիճակը, վոր պատճառում են այդ միջատները, հօկայական է: Ո՞ւմ հայոնի չե, վոր բծավոր տիֆուր վորի տարածման պատճառները վողիներն են, իմայերի թալստական պատճառապմի ժամանակ ավելի մեծ դաշեր և պատճառել, քան հրանոթների դնդակները նույն պատճառապմում:

Մարդկության ամենամեծ չարիքի՝ ժամանակառ (չուժա) տարածման գլուխոր պատճառը, համարյա թե լվերն են:



Ալ. 11 Փայտվողի թրբուրները—առաջինը փորի կողմից, յերկրորդը մեջի, մեջտեղինը—ձև:

Փայտվողիները, բացի այն, վոր, լնչողես պարագիտներ ծծում են մարդու արյունը, մեծ համաստականությունը գուցե և տարածում են զանազան հիվանդություններ (թոքախտ, ծաղիկ, սիրիախտ, վերադարձ տիֆ, ժանամախտ, բորբոքություն, քութեչ և այլն):

Այսպիսով, վերը հիշատակած բոլոր միջատները (վողիները, լվերը, փայտվողիները) համարվում են վարության և նույնառությունների փոխադրողներ:

Վարակված իրերը, ինչպես որինակ՝ սենյակը, կորակը և այլն, վորոնք յենթակա յին դեղինֆերի:

անհամեմուա ունելի վարանը են ներկայացնում, քան ին վողիները, փայտվողիներն ու լվերը, նորհիլ իրենց տեղափոխությունների մարդուց մարդ և կենդանիներից մարդու գիրա անցնելուն:

Սեղ հետաքրքրող միջատների դեմ հաջող պարբերությունը համար պետք է հաշվի առնել նրանց բիոլոգիան (կյանքը) և համաձայն նրա կառուցել միջատների վուշընչացման ինսեկտիցիոն միջոցառումները:

Միջատների վուշնչացման համար առաջարկվող միջոցները չափազանց շատ են: Սակայն չի կարելի նրանց դրությունը վայրէվիլոր և առանց հաշվի առնելու ուսակ էրականության պայմանները: Հարկավոր է ամեն մի ոռանձին դեպք հատուկ քննության առարկա գտրանել և ըստ այնմ վորոնք գործադրվելիք միջոցը, չպիսի հետեւ շարլոն ձևերին, այլ նկատի ունենալ պահպատող պայմանները, խստորեն անհատականացնել յուրաքանչյուր դեպք և ապա նոր ընտրել պայքարի այս կամ այն ձևը:

Վողիների, փայտվողիների և լվերի դեմ մաքառելու միջոցները հանդում են յերկու գլխավոր խմբի: առաջինը՝ ընդհանուր սանիտարական միջոցառումներն են, վորոնք խստիվ հակում են բնակարանների, բակերի, ընդհանրապես բնակեցված վայրերի և մարմնի մաքրության պահպանման վրա, իսկ յերկրորդը՝ սպիցի-ֆիկ, հատուկ կարգի միջոցառումներ են, վորոնցից մեկն ու մեկը գործադրվում ե, նայած, թե միջատներից վորի դեմ և ազդված պայքարը, վոր միջատին պիտի վուշնչացնել:

Պարզ է, վոր յեթե մենք ծանոթ ենք լվերի առաջնայու և նրանց զարգացման հետ, բնդհանուր սահմատական վերահակողական վողիների հարգով բնակարանն ու նրա շրջակայքը հոգատարությամբ կմաքրենք աղրեց ու զանազան չոր ափելցուկներից, հողե հատակը կծածկենք տախտակով, կենդանիների հետ շիռում չենք ունենա և այլն, նման միջոցառումներով լուծած կինենք պատվելու խնդիրը:

Աչքի առաջ ունենալով փայտվողիների կյանքի պայ-

մանները, մանավանդ այն հանգամանքը, վոր նրանք առանց սննդի կարող են ասլրել պատերի, կարասիքի և արձիքի արանքներում ու ճեղքվածքներում, ապա նրանց վոչնչացումը մեզ կհաջողվի շատ կամ քիչ չափով միայն այն ժամանակ, յերբ հաշվի առնենք տվյալ բնակարանի առանձնահատկությունները, լարենք մեր բոլոր ուժերը նրանց վոչնչացնելու և թույլ չտանք բազմանան:

Նույն կերպ պետք է դնել հարցը և վոջիլները վոչքն չացնելու վերաբերմամբ:

Վոջլոտությունը վերացնելու համար անհրաժեշտ ե վերացնել ընդհանուր նառերը, միատեղ պառկելը, աշխատել հաճախակի բաղնիս գնալ ու ճարմակեղենը փոխել, կատարել սանիտարիայի տարրական պահանջները:

Այգպիսով առաջին ու հիմնական պահանջը, վոր զրվում և վոջիլների, փայտվոջիլների ու լվերի մեկվիդայայի յենթարկելու գծով, դա ընդհանուր սանիտարական գործի վերահսկման կարգավորումն և և մեկ ել տեղական սանիտարական որգանների միջոցով աշխատավորության առողջապահական պայմանների բարելավումը:

Բացի այդ, միջատների դեմ ուղղված միջոցառումների հաջող իրագործման համար, հարկավոր ե, վորքան կարելի յե, լայն աշխատվոր մասսաների սեփականություն դարձնել, ինչպես միջատների կյանքի ու զարգացման, նմանապես և նրանց պատճառած ծանր վնասների մասին յեղած տեղեկությունները: Այնուհետեւ սանհրաժեշտ է միջատների դեմ վարչական կովում մասնակից դարձնել իրեն՝ աշխատավոռության, փոռված մերժիների մարժեղությանը իր լինենք ինքնուրույն կերպով գործադրելու միջատների դեմ վարած պայքարի ինսեկտիցեղ միջոցները: Յեկմիայն սանիտարական որգանների զեկավարությամբ ու մասսաների լայն մասնակցությամբ հարելի յե հուսալ միջատների դեմ վարած պայքարի հետեւ միջոցները:

Միջատների վոչնչացման հատուկ ձեռնարկումները


հիմնված են զվարապես ֆիզիքական ու քիմիական միջոցների գործադրման վրա: Բանվորական ըրջաններում, խորհումնեսություններում, ՄԾԿ-ում և մեծ կոլտնտեսություններում, ուր գտնվում են աշխատավորական մեծ ու կազմակերպված խմբավորումներ, հարելի յեղած գեղինսեկցիոն (միջաները վոչնչացնելը) միջոցները կիրառելու համար, անհրաժեշտ է ունենալ մըչ առաքես զեղինսեկտորի պաշտոնով մեկին, վորն աշխատելու տեղական սանիտարական բժշկի ղեկավարության տակ: Դեղինսեկտորը, հարկավ պիտի ծանոթ լինի ընդհանուր հիմունքների հետ: Նա պետք է իրեն հանձնված ըշանում պարուալորաքար ու պլաստիկ կարգով անցիացնի միջատների վոչնչացման բոլոր միջոցառումները: Սիստեմատիկ ու համառ աշխատանքով միայն կարելի յե հասնել պահանջված ձեռնարկումների վոչնչացման համար՝ մենք կանոք կառնենք այդ միջոցներից յուրաքանչյուրի վրա առանձին առանձին:

100
29996

ՊԱՅՔԱՐ ՎՈՉԻԼԵՐԻ ԴԵՄ

Վոջլոտության դեմ պայքարելու ամենակարևոր ու առաջնակարգ ինչիրը բաղնիսի գործի կազմակերպելն ե, առանց վորի վոջլոտության դեմ պայքարելը գործվարին ե: Բաղնիս սարքելիս՝ միշտ պետք է հիշել, վոր բաղնիսը պետք է լինի անցողական ափակի (հանվերու տեղ), լողանալու տեղ, հագնվելուունն ուրիշ տեղ) և սևնեալու յե զեղինֆեկցիոն (ախտահանական) սենյակի: Պարզ ե, վոր վոջլոտության դեմ բաղկակալ պայքար մենքը համար պետք է ունենալ հետեւյալ յեռյակը՝ չուր, սպիտակեղին և ոճառ:

Մարդուն վոջիներից աղատելու համար, անհրաժեշտ ե վոչնչացնել վոչ միան լինի, սպիտակեղինի,



շորերի ու անկողնի մեջ գտնված վողիները, այլև բնակարանի (չափազանց վոջլոտության դեպքում):

Աճառ չինելու դեպքում և առհասարակ լվանալու միջոցների պակասության պատճառով, կարելի յէ և այնոք և ուղարկել մոխրով, մոխրաջրով (առօք): Ավելորդ չե այստեղ հիշատակել, վոր մոխրաջրի զեղին փեկցիոն հատկությունը ժամանակին ուսումնասիր ված է (պրոֆ. ՌՈԶԵՆԲԵՐԳԻ, պրոֆ. ԶԼՈՅՏՈԴՈՐՈՒՎ, ՄԱԼԻՉԱՎԱԿԱՅԱՅԱ): Մոխրաջուր պատրաստելու համար 12 լիտր (1 վերը) ջրին վերցնում են 1,5 կիլո (մոտ 4 ֆունտ) մոխրի: Խառնելով, կրակի վրա լավ յեցում են ու սառեցնելուց հետո, յերբ ծորում են, սահցվում ե «ուժեղ չելոկ»:



Այդ մոխրաջուրը պետք է պահել վեգործի կամ մի վագրին տակառի մեջ, բերանը միշտ փակ: Մոխրաջուրը գործ են ածում հետեւյալ յեղանակով:

1) Սպիտակեղեն լվանալու համար, մի մաս մոխրաջրին խառնում են մի մաս ջուր (յեթե սպիտակեղենը խիստ կեղտոտ է), կամ մի մաս մոխրաջրին յերկու մաս ջուր (յեթե սպիտակեղենը չափ կեղտոտ չէ): Այդ խառնությունը մեջ սպիտակեղենը յեփում են, ըստ վորում, նպատակահարմար ե մի վեցրո (12 լիտր) խառնություն ավելացնել ¼ բաժակ նարիթ (կերասին):


2) Մարմինը լվանալու համար մի մաս մոխրաջրին պետք է խառնել 3 մաս ջուր: Մոխրաջուր պատրաստելու համար, կարելի յէ գործածել թղթենու(ներեզա), ունու (օօնիա), յիղելնու (օլի), կամ կաղնի ծառի մոխրը, միայն մաղելուց հետո:

Մոխրը պետք է պահել չոր տեղ: Նկատի առնելով, վոր բարձր ջերմության արդեցության տակ վոչիլներն ու նրանց ձվիկները վոչնչանում են, այդ մեջոցի նպատակահարմար գործադրությամբ կարելի յէ լավ հետեւյանքների հասնել: Այդ նպատակի համար

չամեազան տաքացնող ապարատներից մենք խորհուրդ կտայինք լնորել բանվորական չքչանների, Մ.Տ.Դ., խորհաննառեսությունների և մեծ կորնտեսությունների համար Փոնդրանի ապարատը կամ Հելիոսը, իսկ փոքր կորնտեսությունների, դյուզերի ու այլ տեղերի համար՝ վողիլ ջարդող կամերաները: Հելիոսը (տես նկ. № 12), ալիքավոր (ՅՈՒՆԻՍՏՈ) յերկաթից պատրաստված մի արկղ ե, վորը գրված և փափուկ



Նկ. 21 ս




Նկ. 12 բ

յերկաթյա վառարանի վրա: Արկղի մեջ տեղափորված ե մի թմբուկ, վորը պատույտ և գալիս հորիզոնական առանցքի չուրչը: Վողլոտ իրերը դրվում են այդ թմբուկի մեջ: Վառարանի ծուխն անցնում և թմբուկի շուրջը և առաքացնում ե նրան: Հելիոսի մեծությունը սովորաբար այնքան ե լինում, վոր նրա թղթուկի մեջ մի անդամից կարելի յէ անդամորել 8-10 կոմպլիկտ իրեր: Վորպեսզի Հելիոսը կանոնավոր կոմպլիկտ իրեր:

կերպով աշխատի, պետք է միշտ աչքի առաջ ունենալ հետեւյալ սպայմանները.—

1) Հետեւյալ ջերմության աստիճանին, վոր չբարձրունա Յելսիուսի 120 աստիճանից մինչեւ 140 աստիճան, պահելով 100 աստիճանից վոչ ցածր. 2) անհրաժեշտ է վորոշ չափով խոնավացնել ողը, ածել ներս ջուրը. 3) ծխի քաշումը պետք է լինի կանոնավոր, իսկ տաքացումը լրիվ. 4) ապարատի թմբուկը չարունակ պետք է պատել, վոր տաքացումը լավ կատարվի.




նկ. 12 գ

5) Իրերը թմբուկի մեջ պետք է դնել այսպես ցանցառ կերպով, վոր տաքացած ողն ապատորեն մուտք գործ և ամեն տեղ. 6) Իրերը թողնել թմբուկի մեջ 30 րոպե. 7) խնամատար վերաբերմունք ունենալ դեպի ապարատը:

Սրագությամբ կառուցելու նպատակով գործ է ածվում և այսպես կոչված գետնատուն կամերան, վորը շնչառ և գետնի մեջ (տես նկ. № 13) յերկու զոներով և յերկու՝ մաքուր և կեղտու հակադիր բա-

ժանմունքներով՝ իրերի համար: Կամերայի շափութուրդ ենք տալիս վերցնել 2,5—4,5 խկ բարձրությունը՝ 2,2 (մետրերով): Կամերայի տաքացումը կատարվում է յերկու յերկաթյա վառարաններով, վորոնք գրված են կամերայի հակադիր կողմերում: Վառելու տեղը պետք է անել դրսից, իսկ ծխնելուցից խողովակները պետք է անցկացնել կամերայի ներսի պատերով:




Հելիոսի կամերայի ներքինի մասը.
նկ. 12 դ

Ջերմությունը պետք է լինի վոչ պակաս 100 աստիճանից, իսկ գեղինսեկցիայի տեղողությունը 25-30 րոպեյից վոչ պակաս:

Քարե կամերան (տես նկ. № 14) հիմնված է տաք աղի և խոնավության միաժամանակ դարձագրման վրա:

Այս վետաբանը չինված է աղյուսից, վորի կոմերտանիվ տռատաղում թողնում են կլոր քարերով կամ աղյուսով շարված անցքեր (ծակեր), կամերտն գտընդուռ և վառարանի վրա: Իրերը զնուամ են այնուեղ նախորդ կամ կամերայում պատրաստվուամ և առանձին շարժողական տեղ (կուլիս): Կառարանը վառելիս, յերբ առառարկի քարերը խիստ տաքանում են, նրանց




Նկ. 12 հ

վրա ջուր են ածում, վորով լցվում ե տաքացած: Պոլորչի: Կամերայի չափերը խորհուրդ ենք տալիս վերցնել՝ $1,55 \cdot 1,95 \cdot 0,85$:


Տաքացնող կամերաները լուվ են աշխատում միւն այն ժամանակ, յերբ նախ՝ իրերը դաստիրված են այնուեղ ցանցառ կերպով և յերկրորդ՝ յերբ այնուեղ տաքացած ողի ազատ շարժում կա և զերծու-

թյունը 100 տատիճանից պակաս չե և 120-140 տատիճանից ավել: Կամերաները պետք ե ունենան ջերմաշափակի, վարպետի հնարավոր մինի հետեւվել դեղինակացիայի ընթացքին կես ժամկան միջոցում:


Վոյդուության դեմ պայքարելու մի լավ միջոց ել, դա սննդումի նման մի արկղում, վորը գերմետիկ կերպով վակվում է, բնադինի գործառնումն է (չոլետք ե




Նկ. 13 ա
Կամերան:



Նկ. 13 ա




Նկ. 13 բ
Հնոյացնական կտրվածք. Ընդյերկայանական կտրվածք.




Նկ. 13 գ
Մոռանալ, վոր բնադինը կրակից շուտ բռնկվող նյութե: Այդ բնադինի արկղների գործածությունն առավելապես նպաստակահարմար ե վոքրիկ բուժ-սանիտարական հիմնարկներում, բանվորական վոքրիմի բարակներում և գյուղացիական անհատական տնտեսություններում: Լաբարատորական վորձերը, վորմենք կտրարել ենք սանիտարիայի և հիգիենայի բնու-

տիտուառում, վո՞լիները վոչնչացնելու համար, շուրջ տվին, վոր բենզինի գոլորշին, վերցրած 0,5 կամ ամենաշատը 1,0 խոր. սմ 1000 խոր. սմ մի լիտրին, (այսինքն՝ 1000 խոր. սմ. ծավալին պետք է վերցնել 0,5 կամ 1,0 խոր. սմ. բենզին), շատ կարճ ժամանակում բարորովին վոչնչանում են վո՞լիներն ու նրանց անիծը:



Նկ. 14

Քարե կամերա.




Նկ. 14 а

Այդ նպատակի համար բավական է ունենալ մեկ արկղ 1 խոր. մետր ծավալով, գերմետիկ կերպով փակվող և այնպես շինված, վոր տախտակներն արանքներ և անցքեր չունենան (ցանկալի յե, վոր արկղը ներսից ցինկով պատած լինի): Արկղի հատակին, մի անկյունում դրվում է բենզինը մի ամանի մեջ լցրած և ծածկված մետաղյա ցանցով վերելում նշած չափով (1·1000) և ապա ցանցառ կերպով դրվում են արկղի

մեջ չորեր կամ սպիտակեղենը մոտ 2-3 ժամ ժամանակով: Այդ միջոցը տեխնիկական գործադրման տեսակետից չափազանց պարզ է: Գետք և յենթաղրել, վոր այդ մատուցելի՝ եժան ու Հուսալի միջոցը գործադրման լայն տարածում կռւնենա:

Շատ լավ է ներգործում վո՞լիների ու անիծների վրա և սովորական նավթը (չորերը կամ սպիտակեղենը նավթի մեջ թթվելիս կամ նրանց վրա նավթ սրբակելիս՝ վո՞լիներն ու անիծները վոչնչանում են 1-2 բուզեյից հետո):



Կ. 16 Նույնը կարված.

Կ. 15 Հեղացիք (պուլվերիֆատոր).

Ցերմակեղենը, անկողնու պարագաները և այլն վո՞լիներից աղատելու համար, չափազանց հասարակ գոյմիները աղատելու համար, չափազանց դիմացկուն ձվիկեղենը (անիծները) յեռացող ջրի մեջ արագությամբ վազընչանում են: Վերեկի չորերն ու առհատարակ այն խթերը, վորոնց յեփ տալ չի կարելի, և բենզինի արկղով ողալիկու հնարակորություն չկա, նպատակահարմար և մաքրել վո՞լիներից կոչտ խոզանակով, թթված զանագան քիմիական նյութերով: Այս վերջններից լավ է, եժանության և դիզինսեկցիոն տեխնիկաից, ոճա-

ուակրեզոլյան պրեպարատները, վորոնք չառ կարճ ժամանակում վոչնչացնում են միջատներին։ Այսպես որինակ՝ կրեզոլյան նավթալիզոլի 10 տոկոսային լուծվածքում թրջված սպիտակեղենի վոջիներն ու անիծները բոլորովին վոչնչանում են։ Բնառակրեզոլյան պրեպարատը սովորաբար պատրաստում են 35 տոկոս կրեզոլից և 65 տոկոս օճառա-նավթից (ոճառ, վորը սպատրաստված և կերասինյան ֆրակցիայից սուացված նավթենյան թթվալյաներից)։ Ինչպես վերելում ասվեց, նավթալիզոլի ամենալավ լուծվածքը—սպորտ նրա 10 տոկոսային լուծվածքն է։ Սակայն կաշվել իրերի ժաքրելու համար կարելի յե գործածել 2-5 տոկոսային լուծվածք, մեքենայորեն կամ սրսկման միջոցով (տես նկ. № 15, 16)։ Թե սրսկումը (պուլիբրիզացիա) և թե մեքենայական մաքրումը պետք է կատարել խնամքով և մեծ զգուշությամբ։

Նավթոլիզոլով ոդտվելը չափազանց նպատակահամար և հոսող (տեկուչի) կազմ ունեցող բանվորական բարակներում (գյուղատնտեսական ժամանակավոր բանվոր և այլն)։ 10 տոկոսային լուծույթ պատրաստելու համար, նախորոք պատրաստված կրեզոլի և օճառա-նավթային խառնուրդը։ Այդ լուծույթն ամելի լավ և ներդրում և պետք է գործադրել քանի նա տաք է։ Սպիտակեղենը գեղինսելցիայի յենթարկելու համար սուզում են տաշտի մեջ, ուր լցված են նավթալիզոլի 10 տոկոսային լուծույթը։ Հետո սպիտակեղենը վորքան հնարավոր և ուժեղ կերպով քամում են։ Միևնույն լուծույթով կարելի յե ոդտվել 3-4 անգամ։ Ուր հնարավոր և սպիտակեղենը, անկողնու պարագաները և այլն, պահում են նավթալիզոլի մեջ ավելի յերկար ժամանակ, փորով հնարավորություն և սուեղծում գործածել վոջիների ու անիծների վոչնչացման համար նավթալիզոլի ավելի թույլ լուծույթներ, այն և 2 տոկոսային և 5 տոկոսային լուծույթ։

Նավթալիզոլի 2 տոկոսային լուծույթում անիծները վոչնչանում են յերկու ժամվա ընթացքում, իսկ

վոջիները՝ մեկ ժամվա ընթացքում, իսկ 5 տոկոսային լուծույթում անիծները վոչնչանում են 3 րոպեյում, իսկ վոջիները՝ 10-15 րոպեյում։ Ինչպես կերպում առկեց, չորեքը վոջիներից աղատելու համառ, կարելի յե դործադրել մեցնարական մաքրում։ Մաքրումը պետք է կատարել մեծ խնամքով խողանակի միջոցով, վորը պիտոք է թրջել նավթալիզոլի 10 տոկոսային լուծույթի մեջ։ յեթե խողանակ չկա, կարելի յե ոգտվել վորեվել փառախոհի կտորով։ Ենույնպես լավ աղդող, բայց թանգարժեք միջոց և լիզոլը վորը գործ և ածվում հաճախ 1 տոկոսային, 2 տոկոսային, 3 տոկոսային և հաղվագյուտ դեպքերում՝ 5 տոկոսային լուծույթներով։

Մարդու մազոտ մասերում գտնված վոջիներից արգասիներու ամենաբարեկեալ միջոցն է մաղերի հեռացնելու ու մաքրելը։ Յեթե այլ միջոցը գործադրելու հնարավորություն չկա, այդ դեպքում վոջիներն ու անիծները վոչնչացնելու ամենալավ միջոցն է բնողինի գործադրումը։ Պետք է բնողինի մեջ թաթախված մէ շորէ կտորով լավ թրջել մարդու մազոտ մասերը։


Կարելի յե նույնպես բնողինով կոմպլեքս զնել դլայի վրա 10 բույսի և տելուղությամբ։ Այդ ժամանակամիջոցում վոչնչանում են թե՛ վոջիները և թե անիծները։

Լավ և ներգործում նաև մի շատ եժան միջոց-քացախը, վորով թրջում են մաղերը լիանալուց առաջ։ Նա լուծում և անիծների սունձային նյութը, վորով նրանք կարած են լինում մաղերին։ Անշուշտ լավ միջոց են նաև սարադիլայից պատրաստված լուծույթը քացախի հետ, սարադիլայի սոճանակը վաղելինի հետ։ Արնեսութիւն նմանապես լավ ինսեկտիցիդ միջոց է։ Մնացած բազմաթիվ միջոցների վրա մենք կանու չենք այն նկատառումք, վոր նրանք բոլորն ել հիմնականում նույնն են, ինչ վոր առաջ բերինք վերելում։ Զարկավ, յեթե լրջանում գոյություն ունի յապոնական տիպի դեղնինֆեցիոն շողեկամերա կամ շողե-ֆորմալինային կամերա, առաջին հերթին պետք է ոդտվել նրանցով, վարովհետեւ գեղկամերան վոչ միայն վոչնչացնում


միջատներին, այլև սպանում և հիվանդությունների ժեկորոններին:

Բարակներում և այլ տեղերում, ուր շատ ե տաք բածված վունտությունը, լավ միջոց և համարվում բնակարանը ծծումքով ծխելը: Այդ նպատակով գործ են ածում ծծմբի կտորները (վոչ փոշի) 50-ից մինչեւ 100,0 (միջին թվով 75,0) յուրաքանչյուր խոր. մետրի համար և վառում: Այդ միջոցը գործածելիս՝ պարտավորաբար պետք են կատար առնել հետեւյալ պայմանները՝

1. Բնակարանը չպետք ե ունենա վոչ մի անցք,



նկ. 17



նկ. 18

Միջատներ և պարագիտներ
վոչնչացնող Զառւսոյլով—Տելիչենկոյի գործիքը.

Վորից ծծմբային դազը կարողանա դուրս դար. դրա համար նախորոք պետք ե լավ փակել բոլոր անցքերը (թղթով, թուղթը խմորով), կամ թուղթը վաղելինով) ու ծեփել մեծ անցքերը:

2. Բարձր բնակարանները (3 մետրից բարձր) սոռնորաբ խորհուրդ չենք տալիս ծծումքով ծխելու, վորովհետեւ ծծմբային դազն իր տեսակարար կշռով

աղից առելի ծանր լինելով՝ չի կարող մնալ բարձր չեր- տերում:

3. Պետք ե ձեռք առնել բոլոր նախազդուչացուցիչ ժիշտոցները հրդեհի դեմ:

4. Ծծումքը պետք ե վառվի արագությամբ, վո- բույժեաեվ ստացվաղ զազը կարող ե աղել մի- ջատների վրա միայն այն ժամանակ, յերբ ոգը կարճ ժամանակամիջոցում ամենամեծ չափով հագեցած կրինի ծծումքով: Համառակ դեպքում միջատները միայն ուշաթափված են լինում, ծիման գործողու- թյունից մի առ ժամանակ հետո, նորից կենդանանում են: Ծծումքի այրումը կարելի յե կատարել հասարակ կրակարանի (մանղալ) վրա շիկացած ածուխով, բայց ավելի լավ ե ունենալ շրջաններում Զառւսոյլով—Տելի- չենկոյի, կամ Բարիսովսկու (տես նկ. № 17, 18) գոր- ծիքները, վորոնք հեշտությամբ կարելի յե շինել տե- ղում հասարակ յերկաթից:

Այդ գործիքն իրենից ներկայացնում ե մի մետա- ղյա արկղ, վորի արտաքին մակերեւվույթի վրա կան 2 շարք ծակեր՝ ողի հոսանքի համար: Նրա մեջ զրվում ե մի ուրիշ արկղ, վորի մեջ լցվում ե ծծումքը և վորի տակը ծակուտված ե: Գործիքը վերելից ծածկվում ե կա- փարիչով, վորն ունի շարժական խողովակ: Այդ գոր- ծիքի աշխատանքը կայանում ե նրանում, վոր ներքին արկղի մեջ լցվում ե ծծումքը (Համապատասխան չա- փով): Արտաքին արկղի հատակին լցնում են դենա- տուրաս սպիրտ, վորը վառվելուց հետո դնում են նրա մեջ յերկորդ արկղը ծծումքով: Այրման միջոցին սպիրտը հալեցնում ե ծծումքը: Սովորաբար ծծումքն ամբողջովին, առանց մնացորդի այրվում ե:

5. Ծծումքի ներգործումը կարելի յե լրիվ համարել ժիայն այն զեպքում, յերբ ծխվող բնակարանը 24 ժամ շարունակ մնում ե փակ, իսկ չայրահեղ զեպքում՝ զոնէ վոչ պակաս քան 12 ժամ:

6. Բնակարանի ջերմությունը, ուր վառվում ե ծծումքը, չպետք ե 15 աստիճանից պակաս լինի:

7. Կտորեղեն գործվածքները սովորաբար փշա-
նում են, համենայն գեպս նրանք նախորոք պետք է չո-
րացված լինեն: Մետաղյա իրերը նույնպես փշանում
են: Բացի հիշատակված պակասություններից, պետք
են նշել և այն, վոր ծծմբային դազը խորը չի մտնում
իրեղնների մեջ և պատերի ու տան կահ-կարասիքի
ծակերի ու անցքերի մեջ: Բացի այդ, նա գրգռում է
աչքի թաղանթն ու չնչառության ճանապարհները և
ունի խեղդիչ հոտ: Ավելի նպատակահարմար են անխա-
պես հալած և թղթի վրա պատրաստված ծծումը
(ըերնիկ):

Գրողական վայրերում, ուր կան թռնիրներ և
ուրիշ միջոցներ գործադրելու հնարավորություն չկա,
առաջարկվում է շորերը թափ տալ թռնիրներում: Սո-
վորաբար հաց թիվելուց հետո թռնիրներում տաքու-
թյունը պահպանվում է յերկար ժամանակ: մեր անձ-
նական փորձը ցույց է տալիս, վոր գյուղական կյանքի
պայմաններում այդ միջոցը տալիս է համապատաս-
խան եֆֆեկտ: Այդ միջոցի գործադրումը կարելի յե-
տաղարկել անհատական տնտեսություններին:


Սպիտակեղենի ու չորերի արթուկելը նույնպես
լով հետեւանք և ունենում (յեթե կարերը շատ հաստ
չեն):

Վերելում հիշված բոլոր միջոցների գործադրու-
մը վոչ մի հետեւանքի չեն հասցնում, յեթե միջոցներ
ձեռք չեն առնիլի հեռացնելու կենցաղյին այն պայ-
մանները, վորոնց չորհիմ առաջ են դարիս ու դար-
գանում վոչիները: Այլ կերպ վոչիները նորից առաջ
կցան: Փայքարը վոչիների դեմ պետք են վարել սիստե-
մատիկ և համառ կերպով, միաժամանակ չմոռանա-
լով հանրամատչելի դարձնելու առաջարկված միջոց-
ներն աշխատավորությանը և վերջններիս լայնորեն
ժամանակից դարձնել միջատների դեմ առարված պայ-
քարին:

ՊԱՅՔԱՐ ՓԱՅՏՎՈՂԻԼՆԵՐ ԳԵՄ Ի

Պայքարը փայտվողիների դեմ, վորոգես ավել-
ի դիմացկում միջատների դեմ, հնարավոր և միայն
այն դեպքում, յեթե գործադրվող միջոցառումները
կիրառելիս՝ հաշվի կառնվեն նրանց յերկար ժամանակ
քաղցի դիմանալու հնարավորությունը, արագ ու մեծ
քաղցի պայմանալու հնարավորությունը, չա-
բազմացումը, նրանց անսովոր կայունությունը, չա-
փազանց դիմացկունությունը և նրանց ապրելու տեղը:


Փայտվողիների (ինչպես և վոչիների) ժիանդա-
մից վոչնչացնելը վոչ մի հետեւանքի չի հասցնում, վո-
չով հանդիսավոր պայմանը չվոչնչացված մի քանի ձմեռ-
բավկանել պատահմանը չվոչնչացված մի քանի ձմեռ-



Նկ. 19 Զայնիկ, վորով յետացրած ջուր են ածում
փայտվողիների վրա.

Ները կամ փայտվողիները բավական են, վոր նօրից
արագությամբ և սուստորեն բազմանան: Այդ պատ-
ճառով փայտվողիների դեմ վարած պայքարը պետք է
լինի տեվական, պիտի կրկնել 2-3 անգամ ամեն 10-12
որը մեկ: Փայտվողիները վոչնչացնելու համար, ամե-
նից առաջ, պետք է ծեփել պատի վրա յեղած բոլոր ծա-
կերն ու անցքերը: Այդ բանը կարելի յե անել հասարակ
ու եժան միջոցով, այն է ծակերը ծեփել կրի լուծույ-
թով (մի մաս ջրին, մի մաս կիր), բայց հետեւել, վոր
վոչ մի անցք չմնա չծեփած: Յեթե մնան ծակերը ու անց-
քը, նրանց զարգացման ու տարածման համար կրկն
բոլած կլինենք հնարավորություններ:


Նպատակահարմար ե միաժամանակ սպիտակաց-
նել պատերն ու առաստաղը : Յերկաթյա մահճակալանե-
րում դանված փայտվողիներին պետք է վառել, ողտ-
վելով այդ նպատակի համար չվեղական հալոցի լամ-
պայով (փականագործի լամպա) : Հալոցի լամպայի
փոխարեն մահճակալների համար կարելի յե դորձ ա-
ծել վառած փայտի կամ թղթի կրակը (ֆակելիոօ
պլամյա) : Յեթե չկա լամպա, պետք ե պատրաստել մի



Նկ. 20 Հիդրոպուլ'տ

Հայնիկ յերկար ու նեղ ծորակով (տես նկ. № 19) (տե-
ղերում կարելի յե պատրաստել սպիտակ թիթեղով) :
Զայնիկի մեջ լցվում ե յեռացող ջուր, վորը լցնում
են մահճակալների, թախտերի և այլ կարասիքի ծալի-
թուն ու ճեղքերը : Շեղական հալոցի լամպը կարելի յե
դորձ ածել պատերի ծակերում ու արանքներում յեղած
փայտվողիները վոշնչացնելու համար, բացի այն մա-

ռերից, վորոնք չինված են վայտից (կարող ե հրդեհ
առաջանալ) : Այդ միջոցների կրկնակի և ուշադիր գոր-
ծադրումը սովորաբար բավական և լինում ազատելու
բնակարանը փայտվողիներից : Այսուել, ուր լամպայով
վառելը կամ տաք ջուր լցնելն այս կամ այն պատճառով
անթույլտարելի յե, խիստ նպատակահարմար ե սրսկել
(տես նկ. № 15 և 20) նավթ, վորի մեջ լուծված ե նալ-
թալին : Դրա համար վերցնում են 90 մաս նավթ (կե-
րասին) և ամելացնելով նրա վրա 10 մաս նալթալին
զղուշությամբ լուծում են ջրային բաղնիսամ (առք
ջրով կաթսայի մեջ) :



Նկ. 22

Հասարակ ցնցուղ լուծույթը սրսկելու համար :

Այդ լուծույթը պետք ե սրսկել, կամ լցնել հասա-
րակ լեյկայով (յեթե չկա պուլիերիղատոր կամ հիդ-
րոպուլտ) մահճակալների, կարասիքի ու պատերի ծա-
կերը, անցքերն ու արանքները (տես նկ. № 15, 20, 21,
22) : Նավթի ու նալթալինի խառնուրդի ներգործու-
թյունը համաձայն մեր դիտողությունների համահա-
վասար ե մնացած դեղինենեցիոն հարուստ արսենալի
միջոցների դորձադրման :

Մենք կանգ առանք այդ խառնուրդի վրա, վորտես
մի նյութի, վորը կատարելապես չուսալի յե ինսեկտի-
ցիոնի մտքով և վորն նժան ու մատչելի յե : Փայտվո-
ղիների դեմ լավ ե նմանապես և ծծումբ ծխելը բնա-

կարանում, պահպանելով վերեվ հիշյած պահանջներ։
այդ մեթոդի կիրառման ժամանակ։

Աճատակ-կրեղոլյան պրեպարատները նույնպես կա-
րելի յե հաջողությամբ դորձադրել, միայն պետք է ոգու-
գել սարացրած 2-5 սուկոսային լուծույթով։ Ֆորմալ-
ֆենիլը (Փորմալին), վորը չատերի կողմից դարձ և
ածվում փայտվողիների վեմ, չի արդարացնում իրան։

Նախիքի ու նավթալինի խառնուրդի, (պրոֆ. Ար-
խիպյանի կողմից առաջարկված) և այլ քիմիական բր-
ուսանիչ միջոցների ներդրությունը կայսնում և նրա-
նում, վոր նրանք չառ լավ անցնեն բոլոր ծանրերի ու
ձեղքվածքների միջեղ պայմանով, վոր նրանց գործա-
ծումն անհրաժեշտորեն կրկնվի։

ՊԱՅՔԱՐԸ ԼՎԵՐԻ ԴԵՄ

Լվերի դեմ վարած պայքարի հիմնական միջոցը
կայսնում և նրանում, վոր հարկ յեղած ուշադրություն-
դարձի այն աեղերի վրա, ուր լվերը զարդանում են։

Ամենից առաջ բնակարանը պետք է մաքրու-
թյան մեջ պահպանել (աղբեկ պատ պահել)։ Ամեն աե-
սակ աղբ (Mycor) ու չոր ավելցաւկներ չարունակ ժա-
մանակին պետք է հեռացվեն, վորովհետեւ նրանց մեջ
և, վոր լվերն աճում են ու բարձանում։ Առանց զբան-
լվերի դեմ վարած պայքարն անհմաստ և ու անողութ,
քանի վոր մենք շարունակ կունենանք բնակարանում,
բակում, պատշաճի տակ և այլ աեղերում նրանց
զարդացմանը նպաստող լավ միջավայր։ Այսպես, վոր
լվերի դեմ ձեռնարկվող ամենաբարդիկալ միջոցը՝ դա
աղբի ժամանակին հեռացնեն ե։ Բացի բնակարանը բ
ժամանակն հասակի մաքուր պահելլ, անհրաժեշտ և
նրա անցքերը փակել և այդպիսով անանցնելի պատ-
վար ստեղծել բնակարանի ու ստորհատակյա տարա-
ծության մեջ։

Տախտակների մեջ յեղած անցքերն ու արանքները
պետք է վերանորոգել կամ ծածկել վորեվե զանգվա-

ծով։ Խորհուրդ են տալիք սործածել 500 դր. այսուրից,
2 լիուր ջրից և 30 գր. շիքից պատրաստված ծեփը։ Այդ
ծեփը պատրաստելու համար պետք է բոլոր նյութերը
խառնել իրար և կուկի վրա յեփել շարունակ խառնե-
լով։ Նրա մեջ պետք է լցնել մանր կարած թղթի կտոր-
լով։ Նրա մեջ պետք է լցնել մանր կարած թղթի կտոր-
լով։ Նրա այն հաշվով, վոր ստացվի թանձր միապաշտղ
շաղախ, վորով և ծեփում են ծակերն ու ծեփերը։

Պետք է գործադրել և հատակները 5-10 սուկոսային
սակթովլիումի լուծույթ, կամ 5 ատկոսային կարբուման
սակթովլիումի լուծույթ, կրեոլինով կամ լիզում 1-3 սո-
բթվուտ, լիզովորմով, կրեոլինով կամ լիզում 1-3 սո-
բթվուտ, լուծույթով լվանալու միջոցը։ Զարեւք և
մուանալ և այն, վոր շների ու կատուների ներկայու-
թյունը բնակարաններում խօստ մեծ չափով նպաս-
տում և լվերի տարածմանը, այդ պատճառով ել կեն-
տականներ չափութ և պահել սննդակում։ Վերջապես լիե-
րը վոչնչացնելու համար նպաստակահամար և գործա-
ծել և պարսկական կամ գալրատական վոշի։


Դալմատական լիի ծաղիկը (բամաչկա, պիրետրա)՝
պատրաստվում և չբացված ծաղիկներից, իսկ պար-
կական կամ ինչպես կոչվում են, կովկասյան լիի ծա-
ղիկը (պիրետրա) ստացվում և չբացված կոկոններից։
Սնչուշտ պիրետրան միջատներ վոչնչացնելու նպաստա-
կահամբար միջոց և կավ աղբում և նույնպես ոչնդրի
տերելի ծուկը, ինչպես և ծխախոտի վոշին։ Լվեր
վոչնչացնելու հետ միջոց և նավթի եմուլսյան խառն
ունակությունը հետ (1.1000), 2-3 լուպեյի ընթաց-
քում լիերը վոչնչանում են, այս եմուլսյան պատրաստ-
ում և հետեւյալ ձևելով՝ ոճառի 3 մասը լուծվում և
դրի 15 մասում և ուղարկալ խառնելով՝ ավելացվում և
տաքացած նավթ (մինչեւ 100 մաս)։

Այս եմուլսյան գործածելուց առաջ լուծվում և մի
մասը 20 մաս ջրի մեջ և այս լուծույթը քառում են հա-
տակին և այլ աեղեր։

Մրանց են վոջիկների, փայտվոջիների և լիերի
զեմ մղմող պայքարի միջոցները, վորոնց հաջողու-
թյանը կախված ե, մի կողմից պրոֆիլակտիկ միջո-
թյանը կախված ե, մի կողմից պրոֆիլակտիկ միջո-

2290

ցառումների, իսկ մյուս կողմից համապատասխան քի-
միական ու ֆիզիքական նյութերի դործադրումից։ Այդ
աշխատանքների համար պահանջվում է վորոշ գրամտ-
կան հատկացումներ, բայց վոր կարեվորն է, աշխա-
տավոր լայն մասսաների ակտիվ մասնակցությունը, ա-
ռանց վորի, պարագիտ միջատների դեմ վարած պայ-
քարը, հաղիվ թե ցանկալի եֆֆեկտ տա :



ՀՀ Ազգային գրադարան



NL0270188

3372

ԳԻՒԾ 25 Կ.



Д-ր А. АЛЕКСАНЯН

**БОРЬБА ПРОТИВ ВШЕЙ, КЛОПОВ
и БЛОХ**

Издание НКЗ ССР Армении

1

*

9

*

3

*

9